Ծիսական, ազգային, մանկական խաղերի նկարագրություն

Ամանորյա ծիսական, մանկական ընկուզախաղեր

Ամանորին որոշ տեղերում ընկույզից պատրաստում են Չարխափան՝ չարը քշող, վախեցնող, չքացնող, խափանող: Վերցնում են 20 սմ և ավելի երկարություն ունեցող թելեր, մեկ ծայրը հագուցում՝ որքան հնարավոր է մեծ գլխով, դնում կեղևների արանքը և սոսնձում: Մի քանի այդպիսի ընկույզների թելերը կապում են իրար, որն էլ դառնում է «Չարխափան»: Հայ մարդիկ հավատում էին, որ այդ շրխկոցը «վախեցնում և քշում է չարին»:

Նախակրթարանում Ամանորը կարելի է ծիսական որոշ էլեմենտներով իրագործել՝ Ծննդյան Ավետիս կատարել (քանի որ փոքրերի համար դժվար է կատարել «Ավետիս», այն կարող են կատարել ծնողները, դաստիարակները), գուլպայի միջից նվեր հանել, ամանորյա ծիսական «Տարի հաց» («Կրկենի», «Դովլաթ կրկենի», «Կլոճ», «Փյունիկ» և այլ անուններով ծիսական հաց) պատրաստել ու բաժանել, և այլն: Բայց, մենք առաջարկում ենք նախ՝ հիմնականում խաղալ ընկույզներով խաղեր, հետո միայն այդ ամենը: Առաջարկվող խաղերը խաղացել ենք մեծով, փոքրով, հաջողվածները՝ փոքրերի հետ:

Երեխաների սիրված խաղերից են եղել վեգը և ընկուզախաղերը:

- ✓ Գետնին փոքրիկ փոսեր են փորում, ապա հերթով, մեկը մյուսի հետևից, ընկույզը գլորում այնպես, որ որ առանց նշանակված գծից շեղվելու, ընկույզն ընկներ փոսի մեջ: Ում հաջողվում է անել, բոլոր գլորած ընկույզները նրանն են:

- ✓ Խաղացողները մի մետր տրամագծով շրջան են գծում և մեջտեղը ուղիղ գծով ընկույզներ շարում: Երեք-չորս մետր հեռավորությունից գցում են վեգերը (վեգի փոխարեն կարելի է օգտագործել մեծ ընկույզ): Եթե թեկուզ մեկն են շրջանից դուրս հանում, շահում են շարված բոլոր ընկույզները:

- ✓ Սեղանին կամ գետնին իրար զուգահեռ երկու շարքով շարվում են ընկույզներ: Խաղացողը, մի շարքի ընկույզները միջնամատի և բութ մատի միջոցով կտտացնելով, պետք է նշանառությամբ շարքից դուրս հանի մյուս շարքի ընկույզները: (Ի դեպ, պարզվեց, որ դա այնքան էլ հեշ չի կատարվում փոքրերի կողմից:)

- ✓ Ընկույզը մատների շրջանաձև շարժումով պտտել: Կարելի է կազմակերպել մրցույթ՝ ում ընկույզն է երկար պտտվում: Եթե սաները դժվարանում են այն կատարել մատներով, կարող են ընկույզը պտտել՝ երկու ձեռքերի ափերի մեջ առնելով այն ու ափերն իրար հակառակ ուղղությամբ շարժելով:

- ✓ Թելից կախված ընկույզը մոտեցնել սանի բերանի մոտ այնպիսի հեռավորությամբ, որ նա կարողանա փչելով հեռացնել իր դեմքից: Փչել ինչպես կարճ, այնպես էլ՝ երկար շնչով: Սրանք վոկալ շնչառական վարժություններ են, որոնք կատարվում են նաև ստվարաթղթից պատրաստված «թիթեռնիկով»:

- ✓ Թելից կախված ընկույզի թելը մատի վրա փաթաթելով կարճեցնել այնքան, որ մնա մեկ թզաչափ: Սաները փորձում են տարուբերելով իրար խփել ընկույզները: Խաղի ընթացքում թելերը փաթաթվում են, որն էլ բավական հետաքրքիր ու զվարճալի է դարձնում բավական դժվար խաղը:

- ✓ Սաներից յուրաքանչյուրի ձեռքին մեկական թելից կախված ընկույզ է (թելի երկարությունը՝ մոտ 30սմ): Նրանք կանգնում են շրջանաձև, իրար բավական մոտ, ձեռքերը մոտեցնում են և սկսում անկանոն թափահարել այնքան, մինչև թելերը խառնվեն իրար: Ստացվում է շրխկան – չարխափան:

- ✓ Սաները, ձեռքերին մեկական Չարխափան բռնած, կանգնում են ուղիղ գծով: Դաստիարակը իր չարխափանով անցնում է սաների մոտով և ռիթմիկ շրխկացնում: Սաները կարող են կրկնել նույն ռիթմը կամ՝ շրխկացնել իրենց ռիթմիկ պատկերը: Շրխկոցով իրար բարևում են, հարցեր տալից և շրխկան պատասխան ստանում: Խաղը հետաքրքիր է միայն այն ժամանակ, երբ խաղավարը գիտի սաների հետ խաղալու ստեղծական «կանոններ», ունի վառ երևակայություն:

Որպես շրխկան, Չարխափանը կարող է ռիթմիկ շրխկոցով նվագակցել ունկնդրվող երաժշտությանը, կատարվող երգին, բանաստեղծությանը: Այն կարող է հանդես գալ ինչպես առանձին, այնպես էլ մյուս՝ հարվածային, շրխկան, չխկչխկան նվագարանների հետ:

Սաների, դաստիարակի ձեռքին մեկական Չարխափան է: Պետք է խափանեն, քշեն ամեն տեսակ վատը, չարը, անցանկալին, խանգարողը: Նախ՝ մաքրում, քշում, հեռացնում են իրենց խմբի չար, անցանկալի երևույթները, ապա իրենց համար անցանկալին: Իհարկե, վերջինս կատարվում է հետաքրքիր, անսպասելի հարցերի և երկխոսության օգնությամբ: Ի դեպ, խաղը խաղալու համար պարտադիր չէ Ամանոր ու

Չարխափանի առկայություն: Երբ ինչ որ բան այնպես չի ընթանում, կարելի է հիշել, որ Չարխափանը չքացնում է խանգարողը. «Որ քո անուշադրությունը Չարխափանը չքացնի»: Շատ կարևոր է այդ ամենն անել հումորով, թեթև, խաղային:

Երեխաները չարխափաններով, ոտքերի դոփյուններով, այլ չխկչխկացող առարկաներով շրխկացնում և աղմկում են: Ներկաներից մեկը հարցնում է.

- Ի՞նչ եք անում:
- Մուկն ենք բռնում:
- Որ ի՞նչ անեք:
- Որ ուղարկենք:
- Ու՞ր:
- Մկստան:

Նորից են աղմկում:

- Ի՞նչ եք անում:
- Ցուրտն ենք բռնում:
- Ու՞ր ուղարկեք:
- Իր երկիրը՝ հյուսիս:

Նորից են աղմկում:

- Ի՞նչ եք անում:
- Ծուլությունն ենք բռնում:
- Ու՞ր ուղարկեք:
- Օվկիանոսի հատակ:

Նորից են աղմկում:

- Ի՞նչ եք անում:
- Փնթիությունն ենք բռնում:
- Ու՞ր ուղարկեք:
- Խոզերի մոտ:

Նորից են աղմկում:

- Ի՞նչ եք անում:
- Անկարգությունն ենք բռնում:
- Ու՞ր ուղարկեք:
- Կապիկների մոտ:

Այսպես կարելի է շարունակել, մինչև կհոգնեն կամ կպարզեն, որ այլևս ոչինչ չմնաց քշելու: Նշվածների փոխարեն կարելի է քշել այն, ինչն ավելի հարմար կգտնեն (իրենց ընկերների վատ արարքները, դժվար, տհաճ և այլ երևույթներ):

Բարեկենդան

Ուղտախաղ. Բարեկենդանին շատ ավելի տարածված էր «ուղտ խաղացնելը»: Երկու ուժեղ մարդ, մեկը՝ առաջը, մյուսը՝ ետևը, ուսերի վրա էին առնում երկու հաստլիկ ձողեր և ամբողջովին փալասով ծածկվում: Քուրջերից շինված, կարկատված ուղտի գլուխ էին ձևացնում և ամրացնում մի բարակ ձողի վրա, որ առջևի մարդը հեշտությամբ կարող էր կրել իր ձեռքին: Սրանց վրա հեծած ուղտապանը, որի երեսը խատուտիկ ներկվում էր, հագնում էր ցնցոտիներ, գլխին դնում քուրջե փաթթոց և ձեռքը երկար, բարակ ու ցեխապատ մի ձող էր առնում: Առջևից ուղտի սանձը քաշող մի պատանի էր լինում՝ նույնօես սև ներկված երեսով ու ցնցոտիներով փաթաթված: Սրանց առջևից գնում էին նվագածուները: Փողոցներից անցնելիս ուղտը և հետևող թափորը կանգ էր առնում մսագործի ու նպարավաճառների խանութների առջև: Ուղտապանը երկարում էր իր ցախոտ ձողը դեպի միսը, դեպի ցուցադրված ապրանքները և պահանջում՝ առնելով իր ուզածները: Ճանապարհին ուղտին և ուղտամարդկանց գինի էլ էին հրամցնում: Ուշագրավ էր ուղտապարը, որը կատարվում էր հաճախակի քացիներ տալով: Ախալքալակի Փ, Խանչալի գյուղում երկու կամ երեք երիտասարդ տղաներ, ուղտ ձևացնելու նպատակով, իրար կոնքից բռնում, կռանում էին: Սապատը ձևացնելու համար նրանց մեջքին մի փոքրիկ կողով էին դնում ու հին վերմակով ծածկում: Ապա այդ բոլորի վրա, բուրդը դեպի դուրսն արած, գցում էին ուղտագույն մուշտակներ: Կռացողներից առաջինը վերցնում էր երկարաթաթ մի կացին և մտցնում մուշտակի թևերից մեկի մեջ: Կացնի պոչով ձևացվում էր ուղտի պարանոցը, իսկ թաթով՝ գլուխը: Մուշտակի թևաբերանը մի փոքր կախ էին թողնում, որը ներկայացնում էր ուղտի կախ ընկած շուրթը: Այնուհետև զանգը կախում էին ուղտի պարանոցից, որպեսզի այն հեռվից հեռու ահազանգեր նրա գալուստը: Ուղտը տեր էր ունենում, որը պարանով սանձում էր և առաջնորդում տնից տուն: Այս ձևով նա մուտք էր գործում գյուղի հատկապես այն տները, որտեղ գիշերային խնջույք և տնային խաղեր կազմակերպած ունևոր ընտանիքները, համախմբված մի տեղ, «բարեկենդան – փորեկենդան» էին անում: Տիրոջ կողմից առաջնորդվելով գոմի օդաները, ուղտը (առջևի դերակատարը) ուղտանման կառանչում էր և, գլուխն ու պարանոցը զանգով ճոճելով աջ ու ձախ, ահազդեցիկ ձևեր էր անում: Նրա մուտքը իսկույն շեղում էր տվյալ ընտանիքի ժամանցի եղանակը: Երեխաները սարսափահար ընկնում էին մեծերի գիրկը: Կանայք ճչում էին, երբ ուղտը փորձում էր իրենց կծել կամ երեխա «կուլ տալ»: Պատանիները երգեցիկ ձայնով ասում էին. Մուկը անկաջ ունի, ուղտը չունի՛, Մուկը անկաջ ունի, ուղտը չունի՛... Եվ, որովհետև ուղտը «հասկանում» էր նրանց այդ արհամարհական խոսքերը, կառանչում, հարձակվում էր նրանց վրա ու ահաբեկում էր: Ուրախ ծիծաղը և ահաբեկման աղաղակները խառնվում էին իրար: Ուղտը տիրոջ հետևյալ երգով

ուղտապար էր խաղում՝ ճոճվում էր, զանգ էր զնգացնում, առաջ էր գալիս ու ետ գնում:
Դավալի՛ ջան, դավալի՛,
Էրկուս քնա, մեկ՝ արի՛:
Ուղտախաղը տևում էր 10 – 15 րոպե, որի համար ուղտատերը, նախապես պայմանավորված լինելով, տանտիրոջից որևէ նվեր էր ստանում: Երբ ուղտախաղը գյուղում ավարտվում էր, դերակատարները հավաքած միջոցներով խնջույք էին կազմակերպում: Տարոնում Բարեկենդանին փայտե ձի էին պատրաստում և, համապատասխան զարդարանք տալուց հետո, խմբով շրջեցնում էին գյուղի մեջ:

Բարեկենդանի մանկական խաղեր

Նախակրթարանում Բարեկենդանին կարելի է խաղալ այն ազգային խաղերը, որոնք սովորաբար խաղում են խմբում՝ «Խաշիլ փափա» , «Մուկն ու կատուն» , «Ժնջիլ, ժնջիլ» , «Խմոր անեմ, լոշիկ թխեմ» , «Մամի, մամի», «Ճվիկ,ճվիկ» և այլն:

Այլ խաղերից կարելի է խաղալ ոտքերով հեծանիվ քշելու խաղը.

Գետնին պառկած, ոտնաթաթերն իրար հպած, ոտքերը համաչափ հեծանիվ քշելու նման տարուբերել՝ խաղի մեջ մտցնելով նաև ձեռքերը:

Ճոճանակի խաղ

Երկու մեծահասակ ձեռքերով հենարան են ստեղծում. Երկուսն էլ աջ ձեռքով բռնում են ձախ ձեռքի դաստակից, կանգնում են իրար դիմաց, ապա երկուսն էլ ձախ ձեռքով բռնում են դիմացինի աջ ձեռքից: Ստացվում է ճոճանակ, որի վրա նստում է սաներից մեկը, որին էլ տարուբերում են՝ ասելով. «Անակ, անակ, ճոճանակ, գնա, արի շարունակ»: Այսպես կարելի է մի քանիսին տարուբերել:

Ի դեպ, Բարեկենդանի պարտադիր խաղերից է եղել ճոճանակով ճոճվելը: ... Շատ տարածված էր ճլորթին կամ ճոճախաղը: Թաղի երիտասարդությունը սովորաբար խաղատեղ էր ընտրում բարձր ու դիմացկուն գերաններ ունեցող գոմ: Որանի սայլի ճոպանը կախում էին հեծանից և նրա երկու օղակների վրա դնում 2 մետրանոց տախտակ: Գետնից մի մետր բարձր այդ տախտակի ծայրին հաճախ աղջիկ ու տղա էր կանգնում: Ճոճախաղերը հաճախ վեր էին ածվում մրցախաղերի՝ ով ավելի մեծ կորագծով կճոճվի: Լոռիում, փոքրերի մի փոքր ճոճվելուց հետո, տան նանեին բերում, նստեցնում էին ճլորթուն, որ «եղ աներ»: Նանի նստելուց հետո հարսները նրա գոգը մի քար էին դնում և, փոխանակ ճոճելու, պտտեցնում էին, թոկը ոլորում, որ հետո բաց թողնելիս հակառակ կողմի վրա էր պտույտ գալիս: Այդ միջոցին պառավը քարը գոգից

վայր էր գցում՝ ասելով. «Էսքան եղ ինձ»: Հարսներից մեկը քարն իսկույն վերցնում և կրկին դնում էր նանեի գիրկը, որ պառավը, վերստին պտույտ գործելուց հետո, քարը նորից գցելով՝ ասեր. «Էսքան եղ էս հարսիս», և այսպես շարունակ, բոլոր հարսների համար, որպեսզի շատ յուղ ունենային: Տարոնում բարեկենդանյան խաղերից վերջինը «կշռեցուկ»-ն էր: Առաստաղի գերաններից կապված մի երկթաթանի ճոճանակի մեջ նստելով՝ կշռվում էին ընկերներն ու ընկերուհիները՝ մյուս տարվա Բարեկենդանին իմանալու համար, թե «արդյոք իրենց կյանքից անցնող տարին, որ պատված էր ամբողջ հոգսերով, ո՞րքան հալել ու մաշել, ծյուրել ու ցամաքացրել է իրենց անձը»...

Մածուն ծախեմ

Ամեն մեկը սենյակի մի անկյունն է բռնում, իսկ այն մեկը, որ անկյունից զուրկ է՝ սրան-նրան ասում է.
- Մածուն ծախեմ, ո՞վ կուզի:
- Ես չեմ ուզում, այսինչը կուզի:
Այս միջոցին սա և անվանված անձը փոխանակում են իրենց տեղերը:
Մածուն ծախողն աշխատում է շտապել և դրանցից մեկի անկյունը գրավել:

Կարմիր կոճակ

Երեխաները նստում են աթոռներին, ձեռքերը մեկնում են առաջ՝ ափերն իրար կպցրած: Խաղավարը իր ափի մեջ թաքցնում է կարմիր կոճակը, մոտենում է յուրաքանչյուր երեխայի ու նրա ափի մեջ մտցնելով իր ձեռքերը՝ կոճակը թաքուն գցում է երեխաներից մեկի ձեռքերի մեջ: Ընթացքում կարող է որևէ խաղերգ արտասանել: Վերջացնելուց հետո ասում է.
- Կարմի՛ր կոճակ, դո՛ւրս արի:

Մուկ - կատու

Երեխաները ձեռք ձեռքի տված շրջան են կազմում՝ նախապես մեկին՝ մուկ, մյուսին կատու նշանակելով: Մուկը դրսից որևէ թևամիջով ներս է մտնում և կատվին խաբս տալով՝ դուրս է գալիս մեկ ուրիշ տեղով, իսկ կատուն հետապնդում է նրան և նույն տեղերով մտնելով ու դուրս գալով՝ աշխատում է բռնել նրան և դերը նրա հետ փոխել: Բայց երբ մկանը շուտ բռնելու տենչով կատուն ոչ թե նախորդի անցած ճանապարհով է անցնում, այլ ուրիշ թևամիջով, այն ժամանակ նրան փոխարինում էր շրջանում կանգնած մեկը՝ խաղը նույնությամբ շարունակելով:

Խնոցի-հարոցի

Խաղում են զույգերով:
Նստած կամ կանգնած դիրքով զույգերը դեմքով իրար են նայում: Մի խաղացողի երկու ձեռքերի մատները հագցրած են դիմացինի մատներին՝ ափը ափին կպած:
-Խնոցի-հարոցի, կարագը՝ ձեզ, թանը՝ մեզ:
կամ՝
-Հարի-հարի խնոցի,
Մեջդ բարի, խնոցի,
Ունկդ բարակ, խնոցի,
Մեջդ կարագ, խնոցի:
Տեքստը ռիթմիկ արտասանելով, առաջին երեխան թեքվում է առաջ՝ ձեռքերը պարզելով առաջ, իսկ երկրորդ երեխան թեքվում է ետ՝ ձեռքերը մոտեցնելով կրծքին: Ապա երկրորդ երեխան թեքվում է առաջ՝ ձեռքերը պարզելով առաջ, իսկ առաջին երեխան ետ՝ ձեռքերը մոտեցնելով կրծքին:

Գայլն ու ոչխարը

Խաղացողներից մեկը դառնում է ոչխար, մյուսը՝ գայլ: Մնացածները ձեռք ձեռքի բռնած շրջան են կազմում, իրենց մեջ են առնում ոչխարին և աշխատում նրան պաշտպանել գայլի հետապնդումներից: Գայլը մնալով դրսում՝ հարձակումներ է գործում շրջափակ կազմողների վրա՝ ջանալով խզել ձեռքերի շղթան և ներս մտնել ոչխարին բռնելու: Երբ գայլին հաջողվում էր շրջափակը որևէ տեղում կտրել, այդ ժամանակ ոչխարին փախցնում են շրջափակից դուրս և գայլին են բռնում «փարախի մեջ»՝ հնարավորություն չտալով հասնել ոչխարի ետևից: Եթե գայլին հաջողվում է ներսից կտրել ներքևի շղթան և դուրս գալ, ոչխարին դարձյալ ներս էին առնում և այսպես շարունակվում էր այնքան ժամանակ, մինչև որ գայլին հաջողվում էր բռնել ոչխարին, որից հետո ոչխարը դառնում էր գայլ, մի ուրիշ խաղացող՝ ոչխար:

Վերմակ - ներքնակ

Խաղում են 2-ական հոգով՝ մեծ մասամբ հոգնած մեջքները հանգստացնելու համար: Խաղացողները կանգնում են մեջքներն իրար կպցրած և երկուսի թևերը մեկը մյուսին շղթայած: Այդ դրությամբ մեկը կռանալով՝ մյուսին առնում է իր շալակը: Շալակողի հարցումով նրանց միջև տեղի է ունենում հետևյալ խոսակցությունը:
-Տակդ ի՞նչ կա:
-Վերմակ, ներքնակ:
Ապա շալակողն էր հարցնում:
-Վրեդ ի՞նչ կա:

_Աստղ ու լուսնյակ:
Խաղացողները կարող են կամաց-կամաց արագացնել այդ գործողությունը:

Խաշիլ ճաշ

10 նավելի հոգով կիսաշրջան են կազմում երեխաները, որոնցից առաջինը մայր է կոչվում: Մեկը թռչուն դառնալով՝ նստում է կիսաշրջանի մեջտեղում ,և հողի վրա զանազան նկարներ է ձևացնում: Կիսաշրջանը մոր առաջնորդությամբ պտտվում է նրա շուրջը: Մայրը թռչունին հարցնումէ.
- Ա՜յ թռչուն, ա՜յ թռչուն, էդ ի՞նչ ես եփում:
- Խաշիլփափա, - պատասխանում է թռչունը:
- Ո՞ւմ համար
- Իմ ճուտերի:
- Կտա՞ս իմ ճուտերին:
- Չեմ տա, խի կուտամ, թե քաջ են, թող իրենք վերցնեն:
Այս խոսքի վրա մայրը կամ ճուտերից մեկը աշխատում է թռչունին խփել և անպայման վայր գցել, ու հաջողվելու դեպքում խփողն ու խփվողը դերերը փոխում են, իսկ եթե ոչ շարունակում են խաղալ այնքան ժամանակ, մինչև որ հաջողեցնում են:

Ծիտը քարին

Խաղացողները վիճակ են գցում և վերջին մնացողին կոչում են՝ կանչող: Խումբը ցրվում է խաղավայրի զանազան կողմերը, իսկ կանչողը կանգնում է կենտրոնում ու կանչում է.
-Ծիտը քարի՜ն:
Խաղացողները երբ լսում են այս բառերը մի- մի քար են գտնում և վրան մեկ կամ երկու ոտքով կանգնում: Կանչողն աշխատում է նրանց խփել դեռ քարերի վրա չկանգնած: Չխփվածները քարերի վրա կանգնելուց հետո սկսում են իրենց կանգնած քարից տեղափոխվել ուրիշ քարի վրա, այնպես որ կանչողի համար հնարավորություն ստեղծվի նրանց խփելու: Ում որ կանչողը խփում է, նա դառնում է կանչող, իսկ նախկին կանչողը մտնում է խմբի մեջ:

Զատիկ. Զվախաղեր

Զատկի տոնին բնորոշ են ձվախաղերը: Այդ օրվան հատկապես սպասել են երեխաներն ու երիտասարդները, ովքեր Զատկին նախորդող կիրակի՝ Ծառզարդարի տոնին, կարկաչա ածելով, երգելով տնետուն են շրջել և Զատկի տոնին խաղալու համար ձվեր հավաքել: Զատկին տներում, բակերում ինքնաբերաբար կազմակերպվող ձվախաղերից ամենատարածվածն ու խորհրդանշականը ձու կռվեցնելն է եղել՝ ծայրերը (քթերը) միմյանց խփելու եղանակով: Տարածված են եղել նաև ձվով բախտագուշակություն անելու, պտտեցնելով քթի վրա երկար պահելու, սեղմելով ձվի ամրությունը փորձելու, ձուն դիպուկ գլորելու խաղերը:

Զուկոտրոցի

Զուկոտրոցին խաղում են երկուսով: Մրցակիցներից յուրաքանչյուրը խաշած, բայց չկոտրված ձու պետք է ունենա: Խաղի նպատակն է՝ պարզել, թե ում ձուն է ավելի ամուր: Խաղացողներից մեկը ձուն պետք է բռնի ափի մեջ՝ բութ մատի և ցուցամատի օղակմամբ, չծածկելով ձվի քիթը, իցկ մյուսը պետք է աշխատի իր ձվի քթով հարվածել խաղընկերոջ ափի մեջ բռնած ձվի քթին այնպես, որ դիմացինի ձուն կոտրվի: Խաղի կանոնները.
1. Զու կռվեցնողները բանավոր կամ վիճակ գցելով պարզում են, թե ով է ձուն բռնողը կամ հարվածողը:
2. Հարվածող կողմը պարտավոր է հարվածը ձվի ճիշտ ծայրամասին ուղղել:
3. Նախ կռվեցնում են ձվերի սուր քթերը և դրանից հետո միայն, երբ այդպիսի պայմանավորվածություն է եղել, կռվեցնում են բութ քիթը բութի կամ հաղթող ձվի սուր քիթը՝ պարտված ձվի սուր քթի հետ:
4. Հաղթողը տիրանում է ջարդված ձվին: Որպես կանոն, այս ձվախաղին նախորդում է ձու կռվեցնողների՝ իրենց ձվի գովաբանությունը: Պարծենում են, թե քանի օր են ձուն աղի մեջ պահել, թե ինչպես է այդ ձուն շատ ձվեր կոտրել և այլն: Մինչ բուն կռվին անվնելը, կռվեցնողները նախ ստուգում են՝ արդյո՞ք կեղծ չի հակառակորդի ձուն (հում ձուն դատարկելով՝ «հմուտները» մեջը լցնում են մոմ, ձյութ), ատամին խփելով ցուցադրաում են իրենց ձվի ամրությունը, կատակով կամ լուրջ առաջարկում են փոխանակել ձվերը և նոր կռվեցնել:

Զուգլդորիկ

Այս խաղը սովորոբար խաղում են ծայրերն արդեն կոտրված, շահած ձվերով: Օրվա երկրորդ կեսին են խաղում, քանի որ օրվա այդ ժամին արդեն չջարդված ձվեր համարյա թե չեն մնում: Խաղում են թեք տեղանքում: Խաղի նպատակն է՝ ձուն բլրակի գագաթից գլորելով դիպցնել մինչ այդ մրցակիցների գլորած ձվերից որևէ մեկին և այդպիսով ձու շահել: Խաղը սկսելուց առաջ խաղացողները, իսկ դրանց թիվը կարող է

նույնիսկ տասնհինգ, քսանը լինել, վիճակով պարզում են խաղի մեջ մտնողների հերթականությունը:
Խաղի կանոնները.
1. Առաջին ձուն գլորողից հետո հաջորդ ձուն գլորողները փորձում են իրենց ձուն այնպես գլորել, որ այն դիպչի մինչ այդ գլորած և բլրի թեք լանջերում կամ ստորոտում անշարժ դիրքում գտնվող որևէ ձվի:
2. Այն խաղացողին, ում հաջողվել է գլորելով խփել ներքևում գտնվող ձվին, իրավունք է վերապահվում վերցնել խփված ձուն և մեկ անգամ ևս գլորել:
3. Խփված ձվի տերը համարվում է պարտված և խաղից դուրս է մնում կամ էլ խաղի մեջ է մտնում նոր ձվով:
4. Ըստ հերթի՝ մինչև վերջ ձվերը գլորելուց հետո առաջին ձուն գլորող մասնակիցը և ըստ հերթի՝ մյուսները (եթե ձուն չեն տարվել) իրավունք ունեն վերցնել իրենց արդեն գլորած ձուն և նորից գլորել:
5. Խաղավարտին, երբ խաղացողների թիվն արդեն խիստ կրճատված է լինում, իսկ ձվերի դիպչելու հավանականությունը՝ պակասած, մասնակիցները կարող են կնքել հետևյալ պայմանը՝ բոլոր ձվերը կվերցնի նա, ով ձուն գլորելիս անշարժ ձվերից ցանկացածին կդիպցնի:
6. Արգելվում է գլորվող ձվին այս կամ այն եղանակով բնական ընթացքից շեղելը:
Այս խաղը առավել հետաքրքիր է դառնում, երբ մասնակիցները շատ են լինում: Խաղի ընթացքում, որպեսզի թյուրիմացություններ և վեճեր չառաջանան, թե ձվերից որը ում է պատկանում, խաղացողը գլորելուց հետո գնում է դրա հետևից և կողքին կանգնում, պայմանով, որ այն չտեղաշարժի և գլորվող ձվերին չխանգարի: Խաղի համար երեխաները կարող են նաև դատավոր ընտրել: «Զուդլդորիկը» հաճախ միայն 5-րդ կանոնի համաձայն են խաղում: Այս դեպքում
ա) որպեսզի խաղացողի կողմից նախապես ուղղություն տալու հնարավորությունը բացառվի, խաղը կազմակերպում են այն պատերի տակ, որտեղ հողը թեքություն ունի: Պատի վրա նախապես մինչև մեկ մետր բարձրության վրա որևէ կետ են նշում, և բոլորը պարտավորվում են այստեղից ձուն պահելով բաց թողնել թեք հարթության վրա.
բ) մրցակիցներից յուրաքանչյուրը նոր ձվով է հանդես գալիս՝ նախօրոք նետած ձուն (ձվերը) գետնին թողնելով: Սա հնարավորություն է ընձեռում, որ գետնին հնարավորին չափ շատ ձվեր կուտակվեն և հաղթողը բոլորին տիրանա.
գ) ձու գլորողը կարող է իր քայլքով մեկ ձու շահել, եթե նրա նետած ձուն որևէ ձվից իր թզի հեռավորության վրա կանգնի: Այս դեպքում վերջինս նրա ավարն է դառնում, բայց սեփական ձուն գետնին է մնում, իսկ քայլ կատարելու հերթը հաջորդ մրցակցին է անցնում.
դ) պահեստային ձու չունենալու դեպքում տվյալ մասնակիցը խաղից դուրս է մնում՝ նախորդ նետած ձվերը կորցնելով:

Ձվարշավ

Այս խաղը նույնպես սովորաբար կոտրված ձվերով են խաղում: Խաղացողները՝ 2 – 4 հոգի, թեք տարածք են ընտրում և բարձունքից միաժամանակ իրենց ձվերը գլորում: Ում ձուն որ հեռու գլորվի, նա էլ հաղթող է ճանաչվում և մյուսների ձվերը «հավաքում»: Ձվերը միաժամանակ և նույն տեղից գլորելու նպատակով խաղացողներից մեկը ձեռքի ձգված ափը ուղղահայաց գետնին է հպում, ապա բոլոր մասնակիցները իրենց ձվերը կողք-կողքի, այս ափ-պատնեշի ետևում են շարում: Ձեռքը հեռացնելուն պես, ձվերը բարձունքից ցած են գլորվում՝ ձվարշավի տպավորություն թողնելով:

Ձուպտտոցի

Խաղի համար մեկին դատավոր են ընտրում, որի հրահանգ տալուն պես որևէ հարթ մակերեսին փորձում են սուր քթի վրա միաժամանակ պտտեցնել ձվերը: Ում ձուն ավելի երկար պտտվի, նա էլ հաղթող է ճանաչվում և մյուս բոլոր խաղացողների ձվերը շահում: Երբեմն, վեճերից խուսափելու նպատակով հաղթողին այլ կերպ են որոշում՝ ելնելով ոչ թե ձվի՝ քթի վրա երկար ժամանակ պտտվելուց, այլ վերջինիս անշարժանալով:

Նախակրթարանի սաների համար ներկայացնում ենք ձվախաղերի պարզ տարբերակներ:

Ձուկոտրոցի

Ձուկոտրոցին խաղում են երկուսով: Մրցակիցներից յուրաքանչյուրը խաշած, չկոտրված ձու պետք է ունենա: Խաղացողներից մեկը ձուն պահում է ափի մեջ՝ բութ մատի և ցուցամատի օղակմամբ, չծածկելով ձվի քիթը, իսկ մյուսը պետք է աշխատի իր ձվի քթով հարվածել խաղընկերոջ ափի մեջ բռնած ձվի քթին այնպես, որ դիմացինի ձուն կոտրվի: Որից հետո «կռվեցնում» են ձվի բութ քթերը:

Ձվարշավ - Ձուգլդորիկ

Խաղը խաղում են կոտրված ձվերով՝ թեք տեղանքում: 2-5 տարեկանների դեպքում կարիք չկա մրցույթ կազմակերպել: Ձվերը միաժամանակ և նույն տեղից գլորելու նպատակով կարելի է վերցնել մոտ մեկ մետր երկարության փայտ, որը որպես պատնեշ դրվում ե թեք տեղանքի վերևում: Մասնակիցները իրենց ձվերը կողք-կողքի

շարում են փայտ-պատնեշի ետևում: Փայտը հեռացնելուն պես ձվերը բարձունքից վար են գլորվում՝ թողնելով ձվարշավի տպավորություն:

Զուպտտոցի

Խաղացողները հրահանգով պտտում են ձվերը: Ում ձուն երկար պտտվեց, այդ ձուն համարվում է հաղթողը:

Ով դիպուկ կնետի Ակլատիզի փետուրը

Ակլատիզի փետուրի ծայրին գնդիկ են ամրացնում և փորձում նետել նախօրոք գծված գծից այն կողմ կամ շրջանի մեջ: Կախված սանի տարիքից և ֆիզիկական կարողությունից, նետելու հեռավորությունը կարելի է կարճել կամ հեռացնել:

Անհաղթ աքլորը

Գծում են շրջան, որի մեջ «աքլորները», մեկ ոտքի վրա ցատկոտելով կռվելու են՝ ուսով դիմացինին հրելով: Նրանցից մեկը մյուսին շրջանից դուրս է հանում: Ցանկալի է՝ մյուս ոտքը գետնին չհպել, բայց, փոքրերի դեպքում, կարելի է հոգնած ոտքը փոխել: Հերթով խաղում են ցանկացողները: Պարտվողներ չկան, կա միայն ուրախ խաղ: Դիտողները կողքից վանկարկում են.

- Տիկ – տիկ – տիկ, գարի կտանք, ցորեն կտանք,
- Տիկ – տիկ – տիկ, գարի կտանք, ցորեն կտանք:

Ամենաուժեղ թռչունները

Ամեն մի թռչնանոցից երկուական թռչուն են խաղի հրավիրվում: Խաղի նպատակն է՝ մրցակիցներով երկու կողմից բռնել ընդհանուր օղակից, ձգել այն՝ ամեն մեկն իր կողմն ու փորձել վերցնել հետևում՝ մեկ մետր հեռավորության վրա դրված ձուն: Ամեն մի թռչնանոցից ներկայացված զույգ խաղացողներից միայն մեկն իրավունք ունի մեկ ձեռքով բռնելու օղակից: Մյուս խաղընկերը մի ձեռքով բռնելու է ընկերոջ պարզած ձեռքը, իսկ ազատ ձեռքով աշխատելու է վերցնել հետևում՝ գետնին դրված ձուն:
Հաղթում է այն զույգը, որի խաղացողներից մեկի ձեռքին օղակն է, մյուսի ձեռքին ավարը՝ ձուն:
Խաղը կարելի կլինի խաղալ մեծերի՝ ծնողի, դաստիարակի, դպրոցահասակ սովորողների հետ:

Արագաշարժ թռչունները

Թռչունները բաժանվում են 2, 3, 4 խմբի, յուրաքանչյուր խմբի թռչունները կանգնում են իրար ետևից, իսկ խմբերը՝ մեկ գծով իրար կողքի: Խմբերն ունեն դատարկ կողով, որի մեջ պետք է լցնեն խմբերից հավասար հեռավորության վրա գտնվող կողովի ձվերը: Մասնակիցների խնդիրն է՝ կքանստած, թռչունի նման ոստոստալով (զմփիկ թռնելով), կողովի միջի ձվերը հերթով իրենց «բույնը» տեղափոխել:

Ճարպիկ թռչունները

«Թռչնանոցներն» ընտրում և խաղի են ուղարկում են իրենց ամենաճարպիկ «թռչուններին»՝ յուրաքանչյուրին տալով մեկ ձու: Խաղի համար ընտրում են ազատ տարածք, որի մեջտեղում «բույն» է տեղադրվում և դրա մեջ մասնակիցների թվից մեկով պակաս ձվեր տեղադրվում: Հնչում է երաժշտությունը, և մասնակիցները ձեռքերը վեր պարզելով սկսում են պարել, պտտվել բնի շուրջը: Երաժշտությունն անակնկալ ընդհատվում է, նրանցից յուրաքանչյուրը փորձում է բնից արագ մի ձու վերցնել: Նա, ով դա անել չի կարողանում, խաղից դուրս է գալիս: Խաղը վերսկսվում է նորից, իհարկե, բնից մեկ ձու ևս պակասեցնելով, և շարունակվում է մինչև մասնակիցներից մեկը կմնա, ով էլ կհամարվի մրցույթի հաղթողը՝ ստանալով «Ամենաճարպիկ» տիտղոսը:

Արագակեր ձագուկը

Մասնակիցները զույգերով են՝ ձագուկն ու կերակրող մայրը: Դպրոց-պարտեզում կերակրող մոր դերում կարող է լինել կրտսեր դպրոցի սովորողներից: Հրահանգն առնելուն պես թռչնամայրերը մեկական ձու են վերցնում, արագ մաքրում, փաթաթում լավաշի մեջ և պատառ-պատառ ձագին կերակրում: Նա, ով արագ կերավ, հաղթում է: Ընդ որում, կերակրող մայրը ձագուկին իրավունք չունի պատառ առաջարկելու, քանի դեռ նախորդ պատառը կուլ չի տվել:

Պահիր մայր թռչունին

Խաղացող թիմերը երկուսն են, որոնց մասնակիցները իրար հետևից միմյանց բռնած շարք են կանգնում: Առջևում թռչնանոցի մայր թռչունն է, մրցակից թիմը՝ դեմ դիմացը: Խաղավարի հրահանգով երկու թիմերի մայր թռչունները բռնում են իրար (կամ ձեռքերց կամ՝ մեջքից), և թիմերը սկսում են իրենց կողմը քաշել նրանց: Այն թիմը, որին հաջողվում է նախօրոք գծված սահմանից իր կողմը քաշել հակառակորդ թիմի մայր թռչունին, հաղթող է ճանաչվում:

Ամեն անգամ հաղթող կողմը զույգեր կազմելով շարք է կանգնում և, ձեռքերը կամար բռնած, վեր պահում: Պարտվածները անցնում են այդ կամարի՝ ասել է թե «թրի տակով»: Խաղը ուրախ ու համերաշխ խաղալու համար վերջին հատվածը կարելի է կատարել ազգային պարի երաժշտության ուղեկցությամբ:

Զատկական խաղերի հիմքում ընկած են [Ռուդիկ Հարությանի «Զատիկ» գրքի](#) «Զատկի տոնի ձվախաղեր» բաժնի խաղերը, որոնք ձևափոխված են և հարմարեցված 2-5 տարեկան սաների տարիքային խմբին:

Զատկական մանկական խաղեր

«Չիք, չիք», «Աղամ, աղամ»

Ավագ շաբաթվա չորեքշաբթի օրվա՝ «Չիք, չիք», «Աղամ, աղամ» ծիսական խաղ

Ավագ շաբաթվա չորեքշաբթի հիմնովին մաքրել են տները, ամեն վատ, չար, պիղծ, հիվանդություն, կեղտ «չիք են արել»: Շուշեցի աղջիկները այդ օրը խաշխաշ հարելու քարը գետնին են քսել ու ասել.
Չիք, չիք, մուկը չիք,
Չիք, չիք, լուն չիք,
Չիք, չիք, կարիճը չիք,
Չիք, չիք, չարակամը չիք,
Չիք, չիք, հիվանդությունը չիք,
Չիք, չիք, օձը չիք...
Զանգեզուրում չիքը հարց ու պատասխանի ձևով էր արվում: Նախ՝ ամբողջ տունը դատարկել են, ապա կանանցից մեկը, քարը ձեռքն առած, բարձրացել է կտուրն ու երդիկի մոտ կանգնել, իսկ մյուսը՝ տան ներսում՝ երդիկի տակ: Տանիքին կանգնածը քարը տանում էր բերում երդիկի շուրջն ու հարցնում.
- Աղամ, աղամ...ի՞նչն աղամ:
- Մուկն աղա:
- Աղամ, աղամ...ի՞նչն աղամ:
- Քունջ ու պուջախի տակերն աղա...
Մարդիկ հմայական արարողությամբ ձգտել են ոչնչացնել չարը, անցանկալին:

Նախակրթարանում 5 տարեկանների հետ «Չիք, չիք», «Աղամ, աղամ» խաղը սաների հետ խաղացինք այնպես, որ նրանց համար ոչ միայն հասկանալի եղավ, այլև խաղացվեց իրենց կողմից՝ պատասխանը չթելադրված: Նախ, բացատրեցինք խաղի իմաստը, ընդհանուր հարցեր տվեցինք՝ ի՞նչն են ուզում, որ չլինի, ի՞նչն է նրանց

խանգարում խաղալիս, դրսում, տանը, խմբում: Ընդհանուր պատասխաններից հետ միայն առանձին փոքր խմբերով նկարահանեցինք: Ընդհանրապես, այդ տարիքի երեխան ազատ է իրեն ծանոթ, տվյալ դեպքում՝ դաստիարակի ներկայությամբ: Խաղը կարող է վարել նաև երաժշտության դաստիարակը: Այս խաղը կարելի է խաղալ ոչ միայն Ավագ շաբաթվա չորեքշաբթի, այլև ցանկացած պահի: Ի դեպ, երբ խաղում էինք, դիտողության փոխարեն «չիք» էինք անում ու «աղում» ընթացքում իրար խանգարող, աղմկող սաների աղմուկը, շշմածությունը, լացը, անկարգությունը և այլն: Եվ ստացվում էր խաղ՝ խաղի մեջ: Այսպես, ծիսական խաղը դառնում է հետաքրքիր, մտնում կյանք և դառնում ամենօրյա խաղ:
Ձվախաղեր - Զատկական մանկական ձվախաղեր Զատկակա ձվախաղերը խաղացինք մեծով, փոքրով, միասին՝ չբաժանվելով մեծի ու փոքրի: Առաջարկում ենք ձվախաղերը խաղալ միասին՝ դաստիարակի, ծնողների, սաների հետ: Երբ միասին են խաղում ու մեծը կազմակերպչի, դատավորի դերում չի, այլ՝ խաղացողի, ստեղծվում է անկաշկանդ, ազատ, ուրած մթնոլորտ: Ու խաղում են բոլորը՝ չհիշելով ոչ տարիք, ոչ՝ կարգավիճակ: Բայց, ասենք, որ մեծերն ավելի ոգևորված ու հավեսով էին խաղում՝ մանկացած, ուրախ, անկաշկանդ: Խաղացեք, ստեղծագործեք, փոքրին խաղի միջոցով ավելի հասկանալի և հեշտ կմատուցեք ազգային սովորույթները, մշակույթը, ծեսը:

Համբարձման ծիսական արարողակարգից

Համբարձման տոնին նախորդող չորեքշաբթի օրը կանայք «Ծաղկամոր կիրակի» էին պահում՝ խուսափում էին որոշ աշխատանքներից ի պատիվ «Ծաղկամոր», որպեսզի նա իրենց երեխաներին զերծ պահեր«ծաղիկ» և «կարմրուկ» հիվանդություններից: Վանեցիների մոտ այն կոչվում էր «Ծաղկամուտ»: Այդ նույն օրը, վաղ առավոտյան սկսվում է հիմնական ծեսի՝ վիճակի նախապատրաստությունը, որի պատճառով էլ հաճախ տոնը կոչվում էր «Վիճակ»: Աղջիկների նախապես ընտրված խմբերը՝ յոթական հոգի, դուրս էին գալիս ծաղիկ հավաքելու: Ծաղիկներից բացի նրանք փարչի մեջ հավաքում էին յոթ աղբյուրից յոթ բուռ ջուր, յոթ տեսակ ծառից յոթ տերև, յոթ տեսակ ծաղիկ, հոսող առվից յոթ տեսակ քար: Փարչի մեջ գցվող ծաղիկներից բացի բազմաթիվ ծաղիկներ էին քաղում՝ զարդարվելու և Համբարձման ծաղկեփնջեր պատրաստելու համար: Ծաղիկների մեջ գերիշխում էին դեղին գինարբուկը (հորոտ-մորոտ), ճերմակ ու վարդագույն սիրի-սիրին, կարմիր ու ոսկեգույն կուժկոտրուկները, բոսորագույն աղբրաց արունը, ալ վարդակակաչը: Ընդհանրապես, աղջիկները դուրս էին գալիս բոլորից գաղտնի և, մինչև իրենց առաքելությունը չկատարեին, անխոս ու լուռ էին մնում: Բայց կային այս կանոնից շեղումներ: Օրինակ, Շիրակում ծաղկահավաքը կատարվում էր օրը ցերեկով, ողջ համայնքի, գյուղի ուղեկցությամբ, զուռնա - դհոլի նվագի տակ: Բասենում աղջիկները ծաղկահավաքի ժամանակ Համբարձման երգեր էին երգում, նրանց ուղեկցում էին տղաները, ձայնակցում

երգերին: Նրանք իրենց հետ վերցնում էին գամփռ շներ, որոնք խաղալով, արտերի մեջ թավալ տալով, վազում էին տերերի առջևից, թռչկոտում, ուրախանում և փաթաթվում տերերի ոտքերին: Քեսափում նույնպես այս ծաղկահավաքը նկատելիորեն ձևափոխվել էր. այստեղ չորեքշաբթի երեկոյան մանկահասակ աղջիկ – տղաների խումբը մի սափոր առած շրջում էր տնետուն՝ «մէնթիվոր» հավաքելու: Նրանք յոթը տուն էին մտնում, յուրաքանչյուր տնից յոթ ափ ջուր, յոթ տերև և յոթ փոքրիկ քարեր հավաքելով՝ դնում լաթով ծածկված սափորի մեջ: Սափորը երբեք գետնին չէին դնում, եթե անհրաժեշտություն էր առաջանում՝ դնում էին եռոտանու վրա կամ կախում գամից: Վանում յուրաքանչյուր խումբն իբրև մի ամբողջություն, անհրաժեշտ էր համարում ունենալ գլխավոր, որ լինում էր ամենից մեծը կամ գեղեցիկը: Ապա որոշում էին պաշտոնները՝ ծաղիկ հավաքողը, ջուր վերցնողը, առաջնորդը և, վերջապես, դրոշակակիրը: Խմբից առաջ գնում էր դրոշակակիրը՝ փայտի ծայրին մի փունջ ծաղիկ և մի գունավոր թաշկինակ կապած: Իրիկնապահին շրջում էին տնետուն, երգում վիճակի երգերից մի տուն, տալիս մի փունջ ծաղիկ, ապա առաջարկում փարչի մեջ տան անդամներից յուրաքանչյուրի անունից մեկական նշան գցել՝ ուլունք, մատանի, կոճակ, բանալի և այլն: Այդ փարչի մեջ հետո էին ջուր լցնելու: Ապա վերցնում էին երկճղանի փայտ, վերին մասում կապում էին մի թզաչափ փայտ, որը դառնում էր խաչաձև, երկու ոտքերով: Հագցնում էին մեկ տարեկան երեխայի հագուստներ: Փայտի վերին մասին գլխի ձև էին տալիս՝ շորեր կապելով: Գլխի առաջին մասին մոտավորապես դեմքի ձև էին տալիս, կապում սպիտակ թաշկինակով և նկարում աչք, քիթ, բերան և այլն: Զարդարում էին, ով ինչով կարող էր, հնարավորինս ճոխ: Բացի գլխի կապից՝ ամեն բանով դարձնում էին երեխայի շատ նման մի խրծիկ, որը շատ անգամ իր ոսկի զարդերով բավական մեծ արժեք էր ունենում (ունենում էր ճակատնոց՝ ոսկու շար, մանյակ կամ ճտնոց, արծաթե խաչ, կուրծքը զարդարված էր զանազան զարդերով): Պատրաստված տիկնիկը ամրացնում էին Փարչի բերանին. երկուսը միասին կոչվում էր Վիճակ: Այն դնում էին ապահով տեղ: Արևը մայր մտնելուց մի քիչ հետո 7 հոգով լուռ, անխոս յոթ աղբյուրից յուրաքանչյուրից հավաքում էին յոթ ափ ջուր, յոթ տեսակ ծառից և յոթ տեսակ ծաղիկներից մեկական տերև և թերթիկներ, յոթ հատ քար ու մի բուռ ավազ: Սկսվում էր ծաղիկը երգերով գովելով փնջելու և վիճակի պուլիկը պատրաստելու հաճելի ծեսը: Ծաղիկը գովելով երգելու ընթացքում աղջիկները գովում էին «Վիճակն» առհասարակ: Աղջիկներից մեկը երգում էր, մյուսները շարունակ կրկնում էին.

Ջան, վիճակ, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

Պատրաստում էին մեծ քանակությամբ ծաղկեփնջեր: Արծկեում և Գործոթում (Բորկրի) այդ ծաղկեփնջերը կոչվում էին խաչփնջեր, ձիավորափնջեր, սիրափնջեր: Մութն ընկնելուց հետո վիճակի փարչը թաքցնում էին խոտերի մեջ և շուրջ բոլորը զարդարում ծաղկեփնջերով: Գիշերը փարչն անպայման պիտի մնար դրսում, բաց

երկնքի տակ՝ «աստղունք», Համբարձման հրաշալի, կախարդական գիշերվա զորավոր հմայքին ենթարկվելու և առավոտյան ցողով օծվելու համար: Այդ վիճակափարչն այնպիսի տեղ էին պահում, որ հանկարծ եզնարած և հոտաղ տղաները չգտնեին: Գտնելու դեպքում նախ վիճակի ավանդական կարգը խախտվում էր, և, երկրորդ, մինչև աղջիկները տղաներին նվեր չտային, ետ չէին ստանում:

Համբարձման մանկական խաղեր

Երբ համացանցով փորձում ես գտնել մանկանց համար Համբարձման նյութեր (և ոչ միայն Համբարձման), հիմնականում հանդիպում ես բեմականացված տարբերակով երեխային չվերաբերող, բայց երեխայի հետ բեմադրված այնպիսի խայտառակության, որ դրանից հետո ծես հասկացությունը ընկալվում է որպես անցանկալի, կյանքում անիրագործելի, մարդկանց, հատկապես՝ մանկանց չվերաբերող երևույթ: Որպեսզի այն վերաբերի սանին, հարկավոր է խաղալ ծիսական գործողությունը՝ մանկական խաղային տարբերակով, խաղալ այն, ինչը հնարավոր է, ինչը կարող է վերաբերել նրան:

Վիճակի տիկնիկի պատրաստում

Վիճակի տիկնիկ պատրաստելու համար հարկավոր է ֆետր, սիլիկոն, մկրատ, թել ու ասեղ: Այն պատրաստում են միասին՝ սաներն ու դաստիարակը: Կարելի է գլուխն ու մարմինն առանձին պատրաստել, քանի որ պետք է հավաքեն բարակվիզ կժի վրա: Շատ կարևոր է, որ սաները տեսնեն՝ ինչպես է պատրաստվում տիկնիկը և իրենց մասնակցությունն ունենան: Կարելի է պատրաստել նաև ամբողջական տիկնիկը և միանգամից հագցնել փայտի ծայրին: Այս դեպքում այն միանգամից հանգիստ կարելի է մտցնել բարակվիզ սափորի մեջ: Ծաղկամոր պատրաստման հատուկ ձև չկա, պատրաստում են այնպես, ինչպես պատկերացնում են, կարող են: Մարմնի մասը նախընտրելի է պատրաստել շրջազգեստի ձևով, քանի որ այն ծածկում է կուժը, և Ծաղկամոր տիկնիկը ստացվում է հավաք, ամբողջական:

Ծաղկահավաք

Համբարձման ծիսական գլխավոր գործողություններից է Ծաղկահավաքը: Նախակրթարանում այն կարելի է վերածել խաղի, որտեղ աղջիկները կլինեն ծաղիկներ, իսկ տղաները՝ մեղուներ, բզեզներ, զատիկներ: Ցանկալի է, որ սաներն ունենան համապատասխան հանդերձանք, բայց, եթե չկա, այնքան էլ «սարսափելի» չէ: «Ծաղիկները» որևէ կանաչապատ տարածքում (դա կարող է լինել նախակրթարանի ներքին բակը կամ այլ տեղ) խառը կանգնում են և թեթև օրորվում:

«Մեղունները», «բզեզները», «զատիկները» բզզալով մոտենում են «ծաղիկներին», յուրաքանչյուրն ընտրում է իր զույգին: Մեղունները, փոքրիկ դույլերը ձեռքերին, հյութ են հավաքում ծաղիկներից: Հյութը հավաքելուց հետո միասին, երկու ձեռքերից բռնած, պտտվում են տեղում: Զույգերով երգելով գալիս և հավաքվում են նախօրոք պատրաստված Վիճակի տիկնիկի շուրջ: Ծաղիկները առանձնանում են, կքանստում և ստեղծում ծաղկեփունջ: Բզեզները, մեղունները, զատիկները, իրար ձեռք բռնած, պտտվում են նրանց շուրջը և երգում Համբարձման ծիսական երգ:

Ջրի, ծաղկի, քարի, ծառի տերևի հավաք՝ փարչի մեջ

Սաները վերցնում են լայնվիզ սափոր, որի մեջ պետք է հավաքեն յոթ բուռ ջուր՝ տարբեր աղբյուրներից, 7 տարբեր տեսակի ծաղիկ, 7 քար, 7 տարբեր ծառերի տերև: Ջուր կարելի է հավաքել ցայտաղբյուներից, նախակրթարանի խմբերի ջրի ծորակներից: Սաները անցնում են խմբերով և հերթով բռով ջուր լցնում սափորի մեջ: Եթե ցայտաղբյուրից են լցնելու, ցանկալի է, որ ոչ մեծ խմբով գնան: Բակից հավաքում են 7 փոքր քար, 7 տարբեր ծառերի տերև, 7 տաբեր տեսակ ծաղիկ և հերթով գցում սափորի մեջ: Այս ամենից բացի, նախօրոք հավաքած ծաղիկներից պսակ են հյուսում և հագցնում սափորի վրա:

Վիճակահանություն

Վիճակահանության համար հարկավոր է կավե խոր ափսե, որի մեջ սաները կգցեն որևէ իր՝ խաղալիք, կոճակ, մատնոց և այլն: Հավաքելուց հետո այն ծածկում են որևէ կտորով: Հավաքվում են խմբասենյակում, սաներից մեկը հերթով հանում է գցած իրերը: Յուրաքանչյուր իրը հանելիս որոշում են՝ ինչ են նվիրելու տիրոջը: Նվերը կարող է լինել երգի, բանաստեղծության կատարման տեսքով: Կարող են նաև նախօրոք ընտրած երաժշտության ուղեկցությամբ շրջանով պարել՝ շրջանի մեջ առնելով այսն սանին, որի իրը հանել են: Կարելի է ստեղծել այլ տարբերակներ: Դաստիարակը թղթերի վրա գրում է հետաքրքիր «գուշակություններ», որոնք լցնում է կավից խոր թասի մեջ: Խմբով անցնում են մյուս խմբերով՝ երգելով Համբարձման ծիսական երգ: Երբ մտնում են այլ խումբ, դաստիարակին են մոտեցնում թասը և երգում.
Տեսեք, Վիճակն ինչ կուզի,
Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն,
Սըրտի ուզածըն ինչ ի,
Ջա՛ն, վիճակ, ջա՛ն, ջա՛ն:
Դաստիարակը որևէ քաղցրավենիք կամ գումար է դնում թասի մեջ: Եվ այսպես շարունակում են, մինչև վերջանում են գուշակության թղթերը: Հավաքված գումարով

Գնում են քաղցրավենիք և բաժանում խմբի սաներին: